«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 191-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

——————— 2026 թվականի N ——— Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 191-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման հետևանքով (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում) բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող

մշտադիտարկումների (այսուհետ՝ մշտադիտարկում), այդ թվում՝ մթնոլորտային օդի որակի շարունակական (անընդհատ) մշտադիտարկման իրականացման պահանջները, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին) եռամսյակային կտրվածքով հաղորդումները, տարեկան հաշվետվությունները ներկայացնելու, դրանք ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքում տեղադրելու, իսկ մթնոլորտային օդի որակի շարունակական (անընդհատ) չափումների միջոցով մշտադիտարկման իրականացման դեպքում՝ նաև առցանց հարթակում հրապարակելու հետ կապված հարաբերությունները։»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին, 7.2-րդ, 7.3-րդ, 7.4-րդ կետերով՝

«7.1. Ընդերքօգտագործման բնագավառում կախված մասնիկների ($PM_{2,5}$ և PM_{10}) նկատմամբ շարունակական (անընդհատ) չափումների միջոցով մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումները պարտադիր են։

7.2. Կախված մասնիկների ($PM_{2,5}$ և PM_{10}) նկատմամբ մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներն իրականացվում են շարունակական (անընդհատ) չափումների միջոցով։

7.3. Մթնոլորտային օդի որակի շարունակական (անընդհատ) մշտադիտարկման դեպքում չափումներն իրականացվում են ստուգաչափված և տրամաչափարկված սարքավորումների միջոցով։

7.4. Շարունակական (անընդհատ) մշտադիտարկման սարքավորումները պետք է ապահովեն տվյալների անընդհատ գրանցում, պահպանում և առցանց հարթակով ժամային պարբերականությամբ հրապարակում։»։

3) Հավելվածի 14-րդ կետում «տեղադրվում է այդ կայքում» բառերը փոխարինել «նաև տեղադրվում է այդ կայքում» բառերով։

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-ին և 15.2-րդ կետերով՝

«15.1. Մթնոլորտային օդի որակի շարունակական (անընդհատ) մշտադիտարկման արդյունքներն ենթակա են ժամային պարբերականությամբ տվյալների փոխանցման և հրապարակման ընդերքօգտագործողի պաշտոնական էլեկտրոնային հարթակում, տեղական ինքնակառավարման

մարմիններում կախված մասնիկների ($PM_{2,5}$ և PM_{10}) արտանետումների վերահսկման նպատակով ստեղծված առցանց հարթակի առկայության դեպքում՝ տվյալ հարթակին։

15.2. Մթնոլորտային օդի որակի սահմանային արժեքների գերազանցման դեպքում ընդերքօգտագործողը պարտավոր է անհապաղ ձեռնարկել արտանետումների նվազեցման միջոցառումներ՝ համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթի։»։

5) Ձև N 1-ի աղյուսակի 3-րդ տողի 3-րդ սյունակի «հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM_{10} և $PM_{2.5}$), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին» բառերը փոխարինել «ածխածնի մոնօքսիդ՝ CO, ծծմբի երկօքսիդ՝ SO_2, ազոտի երկօքսիդ՝ NO_2, գետնամերձ օզոն՝ O_3 և հանքավայրին բնորոշ աղտոտող այլ նյութեր» բառերով։

6) Ձև N 1-ի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

Մթնոլորտային օդ	Արտադրական հրապարակ	Կախված մասնիկներ ($PM_{2,5}$ և PM_{10})	Չափումներ շարունակական (անընդհատ) չափման սարքավորումներով	

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2028 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ ագլոմերացիայի (ք.Երևան), որի համար սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան